ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի հոկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2021 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 24,093 մլն դրամ՝ պլանավորված 17,100 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 40.9 տոկոսով կամ 6,993 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարվել են 43.1 տոկոսով կամ պակաս է հավաքագրվել 18,240.7 մլն դրամ:

Հոկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2,691.8 մլն դրամ՝ պլանավորված 2,400 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 12.2 տոկոսով կամ 291,8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 75, լուծարվել՝ 7 տնտեսավարող սուբյեկտ:

Իրականացվել է 1 լուծարային ստուգում, որի արդյունքում լրացուցիչ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ չեն հայտնաբերվել:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 57 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 26-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 11-ական՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության ու ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշմամբ հաստատված միջոցառման 8-րդ կետով նախատեսված վնասի չափի հիմնավորվածության ճշտության, 7-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և 2 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6,746 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6,417:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 34 պայմանագրեր:

Հաշվետու ամսում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ կայացվել և ուժի մեջ են մտել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման թվով 27 որոշումներ՝ 159 մլն դրամ գումարի չափով:

Նույն օրենքի համաձայն՝ ԱՀ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն են ներկայացվել անբողոքարկելի դարձած թվով 6 ստուգման (վարչական) ակտեր՝ շուրջ 14 մլն դրամ գումարի չափով:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում հաշվետու ամսում կատարվել է 34,8 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 7 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2021 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ԱՀ տարածք են ներմուծվել 10,610.3 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից պակաս է 3,100.2 մլն դրամով կամ 29.2 տոկոսով: Նույն ժամանակահատվածում արտահանվել են 2,195.1 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1,074 մլն դրամի դիմաց կամ ավել 104.3 տոկոսով:

ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում շարունակվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու նպատակով հարկ վճարողներից դիմումների ընդունման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել են 20 տեղեկանքներ, մերժվել՝ 6 դիմում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

ԱՀ ՊԵԿ նախագահ Դավիթ Պողոսյանի գլխավորած պատվիրակությունը հաշվետու ամսում հանդիպում է ունեցել ՀՀ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանի

հետ: Կողմերը քննարկել են երկու կառույցների միջև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությանը, էլեկտրոնային հարկային հաշիվների ինտեգրված համակարգերի ներդրմանը վերաբերող հարցեր, ինչպես նաև 44-օրյա պատերազմից հետո ԱՀ ՊԵԿ սերվերային համակարգերի տեխնիկական վերազինման անհրաժեշտությունը:

Հաշվետու ամսվա ընթացքում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Աշխատանքներ են տարվել նոր տեսակի կորոնավիրուսային վարակի (COVID-19) տարածումը կանխարգելելու նպատակով: Մասնավորապես, ՊԵԿ նախագահի հրամանով նշանակվել է Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում կորոնավիրուսային վարակի տարածման կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումների պատասխանատու, կոմիտեի վարչական շենքերի մուտքերում և սպասարկման սրահներում տեղադրվել են ախտահանող միջոցներ, քաղաքացիների հետ անմիջական շփման մեջ գտնվող աշխատակիցներն ապահովվել անհատական պաշտպանիչ միջոցներով:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով հրապարակվել է առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին ու անհատ

ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 6 տեղեկանք:

Հոկտեմբեր ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 403, ելքագրվել՝ 305 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն, որից 1-ը՝ էլեկտրոնային եղանակով: